

տարածեալ, այլ և անհաւատից անգամ քարոզեալ և հռչակեալ. որովք ոչ սակաւ անհաւատից էած յուղիղ յարքունի պողոտայն զդաստացեալ գլխովին, ոչ միայն յառաքինակատար կեանս անցաւոր, այլ և զինի տիրակոչ վախճանին բարձմամբ զբժընդակ ախտից՝ հարուածոց և քսամնափուշ հիւանդութեանց, և պէսպէս սարսուելի ախտաժեւորութեանց ջերմ սիրով ամենակալին՝ և սրախ ջերմեռանդութեամբ, ի բարեխօսութիւն իւր զիմել ապաստանելոց, որ և մինչև ցայսօր զհիանալիս գործէ գործս՝ անհետադարձ մաղթանօքն՝ որ առ Տէր. յոյր վասն և սա ինքն եօթնաջահան լուսոյն ընդունակ այրս ըստ սրտին Աստուծոյ սուրբն՝ Աերսէս Հնորհալին՝ զբաղմբարախտ հայրապետիս սրբոյն Յակօբայ զբարեխօսութիւնն յուշ առնէ յարաժամ, յորդորելով զամենեւեան զմեղսամած որդիքս նորա ապաստանիլ յանդարձ մաղթանս նորին, և միջնորդ առ Տէր ունիլ ի ձեռին ի բաղմած ուփ խոովութեանցս վայրի, յորում ազգի ազգի քրսամընելի ախտք և հիւանդութիւնք վասն մեղաց մերոց զօրացեալք առ մեզ հասանին. ուստի որպէս մեղր քաղցր ի բերան սրբոյ հայրապետիս ձայնէ նուազելով՝ «բարեխօսութեամբ և աղօթիւք սրբոյն Յակօբայ, ։։ Բարեխօսութիւն սրբոցս ոչ նրպաստէ մեզ ի մահտարաժամէ և եթ ազատիլ, այլ յամենայն ցաւոց և ի պատուհասից, և յանփոփոխ ցասմանէ Աստուծոյ և ըստ արդար իրաւանց առ հէքս արագ հասելոյ, ի դիւական լիկմանէ, ի յրնգարոյս վշտաց, ի ձախողակի նեղութեանց, ի բաղմազան փորձութեանց, որք ի յանցանաց մերոց զօրացեալք զմեզ թեւակո-

խեն. վասն որոյ ոչ դք է յաստուածասէր արանց՝ որ հայցէ անտի օգնութիւն ջերմ հոգւով և անթերի հաւատով, և ոչ առնուցու յինչ և իցէ նեղութեան. սակայն բովանդակապէս խօսելով, առաւել պահպան գոլով սրբոյս ազատել զվշտադնեալս ի ժանտախտէ և տիրահաճոյ մաղթանօք բառնալ յերկրէ զախտն գլխովին՝ տիրապէս մարթ է այսպիսի դառնաղէտ ժամու և ժամանակի ի մշտափայլ բարեխօսութիւն նորին դիմել, որով փայլի ի պարս սրբոց առաւել արդեամբք հրաշից առ ախտաժէտ անձինս, և խնդրել ի նմանէ զերագահասն օգնութիւն, առնելով յանուն նորա զպտուղս առաքինական արդեանց՝ զողորմութեանց ասեմ և զաղօթից, որ և նա շարժեալ ի գութ հայրական ըստ առաքինական գործոց և վաստակոց որ յանուն իւր՝ հատուցէ կրկնապատիկ բարիս միջնորդութեան և բարեխօսութեան իւրոյ՝ ի դէպ ժամու օգնականութեան։ Այլ արդ զտեալ զմիջնորդ հաշտութեան դարձուցանէ զերգս բանից իւրոց ի հայցուածս օգնութեան, ի ներող լսողութենէ նորին առ վաղ ընկալնոյ՝ ասե-

(Երեսն-ինն)

ԴԱՍԾԱՍԾՅՈՒԹԻՒՆ ԿԲՕՆԻ.

(Երեսն-ինն)

ԱՍՏՈՒԱՍԾՆԵՔ ՈՒՍՈՒՄԸ.

Աստուածաշնչի ուսումը պէտք է ուսումնասիրել աշակերտին այն ժամանակից իսկ, երբ նա մտնում է ուսումնարան, Աստուածաշնչի պատմութիւնները պատմելով

նրան ընդդէմ, որովհետեւ նոցա մէջ
կան այնպիսի անցքեր, որոնք տակաւին
անպատշաճ են վեցամեայ տղային. կան և
այնպիսիք, որոնք չեն կարող սնուցանել
մանկական հոգին: Այլ անկարելի է տակա-
ւին չզարգացած մանուկներին համար ընտ-
րել այնպիսի մի եղանակ դաստիարակութեան,
որ կարողանար նոցա ուսման ապագայ շըր-
ջաններում ևս գործադրել լինիլ: Արքան
ևս հակառակէին դորան՝ սակայն հարկա-
ւորվում է յարմարուիլ մանկական հաս-
կացողութեանը. անշուշտ պէտք է պատ-
մել մի իրողութիւն կամ նոցա հասկանա-
լի լեզուով, կամ մեր պատմողութեան
հետ կցել այնքան բացադրութիւններ, որ
րոնցով երեխայքը ամբոխուած՝ մոռա-
նային նոյն իսկ իրողութիւնը: Բայց նոյն
իսկ իրողութիւններն են օգտակար կեր-
պով ներգործողը երեխաների վերայ, և
ոչ թէ ուսուցչի դատողութիւնները նոցա
մասին: Բարոյախօսութեան մէջ ևս զա-
նազանակերպ ասացուածքը՝ միայն տկա-
րացնում են տպաւորութիւնը: Բարոյա-
կան եզրակացութիւնը եղելութեանց մա-
սին պէտք է բղխէ նոյն իսկ եղելութիւ-
նից, համառօտապէս ցուցանելով նոցա
յարմարութիւնը կամ անյարմարութիւ-
նը Աստուածային կամ մարդկային օրի-
նաց:—Այս կերպով Աստուածաշնչի եղե-
լութեանց կամ անձանց պատկերները տպա-
ւորվում են յիշողութեան մէջ անջինջ և
լինում են իբրեւ մի բարոյականութեան
սկզբունք: Արեւիսայքը արդէն իրանք ի-
րանց կունենան սեր դէպ ի բարիները,
զգուանք դէպ ի չարերը, ներողամտու-
թիւն դէպ ի գայթակղողները և կարեկ-
ցութիւն դէպ ի չարչարողները առանց

մի դիտաւորեալ ազդեցութեան ուսուց-
չի կողմից. նոքա ինքեանք կհամեմատեն ի-
րանց և ուրիշներին Աստուածաշնչում
պատմուած անձանց հետ և կորոնեն յա-
րաբերութիւնը նոցա հետ. այս տեղ ա-
ռաջնորդել ևս կարող կլինի ուսուցիչը:
Այլ այս պատճառաւ հարկաւոր է ներկա-
յացնել յիշեալ անձինքը այնպէս՝ ինչ-
պէս որ են, առանց գեղեցկացնելու կամ
տգեղացնելու նոցա նկարագիրը. ճշմար-
տութիւնը աւելի հզօր կերպով է ներգոր-
ծում առանց պաճուճանաց:—Իսկ թէ
Աստուածաշնչի ներկայացրած մարդիքը
չեն մտաւորական, այլ իրական, երբեմն իբ-
րեւ քաջ, երբեմն իբրեւ տկար, երբեմն իբ-
րեւ անձնանուէր Աստուծոյ և երբեմն իբրեւ
անջատուած նորանից, այս յայտնվում է
առաջին իսկ հայեացքից: Աթէ մենք ա-
մենայն մասամբ կարդարացնենք ազնիւ
մարդերին ի փնաս իրաւանց, այն ժամա-
նակ մենք կուսուցանենք երեխաներին սո-
փեստութիւն և կեղծաւորութիւն:

Ինչ որ վերաբերվում է հրաշքերին,
(Աստուծոյ յայտնի մասնակցութիւնները
մարդկանց ճակատագրին) պէտք է ասել,
որ ուսման այս աստիճանում չէ կարող ե-
րեւել ոչ մի դժուարութիւն: Արեւիսայն
հաւատում է առանց հարցանելու «ին-
չո՞ւ համար և ի՞նչպէս», : Այս երեխայա-
կան հաւատը ուսուցիչը չպէտք է շփոթէ
իւր բացատրութիւններով: Աթէ նա երե-
ւակայում է իրան՝ զարգացման այն բարձր
աստիճանում, որ հրաշքները դադարած
են լինել իւր համար հրաշք, այնու ամենայ-
նիւ պէտք է հասկանայ, որ անվայել է հա-
ւասարել իւր հետ երեխային, որի առա-
ջին դեռ ևս շատ տարիներ կան ինքնակայ

կամ անկախ զարգացման հասնելու: Աւսիրաւի մանկավարժութեան հմտացած ամեն մի մարդ պէտք է խոստովանի, որ Աստուածաշնչի մէջ պարունակուած հրաշքներին բնական ճանապարհով բացատրութիւններ տալու փորձերը եղել են շատ անտեղի, և չէ կարելի ձեռնամուխ լինել դարերով սրբագործուած հաւատին՝ չունենալով կարողութիւն փոխարկելու նրան որ և իցէ լաւ բանով: Առանց մի նպատակի մատաղ հոգւոց մէջ կարծիք տնկել դէպ ի այն, որին ուսել են իրանց մեծարելի մարդերից հաւատալ՝ և հաւատում են՝ չէ՞ նշանակում արդեօք խանգարել երեսայական բնաւորութեան ամենալաւ կողմերը: Աւ ի՞նչպէս է ձեռնամուխ լինում սորան այն ուսուցիչը, որը մի և նոյն ժամանակ դէպի ինքը ևս պահանջում է նոցանից լիակատար հաւատ: Արդէն մանկավարժական հարկադրութիւնները իրաւունք են տալիս ուսումնարանական կառավարութեանը վերահասու լինել խստապէս, թէ կրօնի ուսուցիչը ի՞նչպէս է խօսում երեխաների հետ հրաշքների մասին, բայց գլխաւորապէս հսկել նորա մասին՝ Ակեղեցւոյ գործն է: Ուսուցիչը պարտաւոր է նախապէս զդուշացնել աշակերաններին Աստուածաշնչի հրաշքները չշփոթել սնապաշտ և դիւրահաւատ մարդերի առասպելների և նախապաշարմունքների հետ. ցոյց տալ նոցա՝ թէ Աստուած ի՞նչպէս իւր Առաքեալների գերբնական գործերովը մարդկան ազգի ընթացքը դէպ ի փրկութիւնը ուղղեց: Այսպիսի զանազանութիւններով կարելի է պաշտպանել երեխաներին սնապաշտութիւնից և ուսուցանել մեծարել Աստուածաշնչի հր-

աշքները: Այսպիսով ուսման առաջին քայլափոխում յառաջանալ կսկսի և վերջինը ինքն ըստ ինքեան: Այն պահիւստի պատմութիւնները յառաջընթաց պէտք է լինին՝ Նոր Ատակարանի պատմութիւններին ոչ միայն ժամանակակարգ պահպանելոյ համար, այլ և նորա համար, որ առաջինները երեսաների համար աւելի դիւրամբռնելի լինելով քան վերջինները՝ չեն պահանջում այնքան բացադրութիւններ: Արեւիսաների երեւակայութիւնը աւելի հեշտ կարող է փոխադրուիլ դէպ ի Ազիպտոս և Արարիայի անպապատները՝ քան թէ դէպ ի Փարիսեցիքը և մաքսաւորները. և նորա համար ևս որ Նոր Օրէնքին մէջ Օրինական ասացուածները շատ են, մանաւանդ որ երեսայն ըստ իւր կրօնական գարգացման աւելի համեմատութիւն ունի մարդկութեան մանուկ հասակին: Անկատարը պէտք է ծառայէ կատարելալ պատրաստութեան համար:

Որպիսի պատմութիւնները գլխաւորապէս ընդհանրութիւնները թողուլ, այս մասին ամենայն ժամանակ լինում են տարբեր կարծիքներ. ըստ իմ կարծաց աւելի լաւ է թողուլ այս ընտրողութիւնը ուսուցչին, եթէ միայն ընդունակ է նա ի գործ ածել ինքնակայ կամ անկախ խօսակցութիւն և ոչ թէ ճնշել իրան նոյնպիսի խօսակցութեան պատրաստականութիւններով. իսկ եթէ ուսուցիչը այնքան ընդունակ չէ՝ կամ ժամանակ չունի այս մասին, հապա պարտաւոր է նա դիմել այնպիսի գրեանց օգնութեանը, որոնց մէջ Աստուածաշնչի փոքրիկ, հետաքրքիր և իրատական պատմութիւնները պատմուած լինին այնպէս, որ երեխաները անգամ նը-

բանց կարգալով իրանք իրանց կարող կը լինին հասկանալ: Սակայն ընթերցանութիւնը չէ կարող ունենալ այնպիսի կենդանութիւն, ինչպէս բերանացի պատմութիւնը, որը անջնջելի տպաւորում է երեսխանների հոգւոյ մէջ Աստուածաշնչի պատկերները: Ասի պատմութիւնը պէտք է բաժանել շատ փոքր մասերի, իւրաքանչիւրը կազմուած ոչ շատ բարդուած նախադասութիւններից, և հարկադրել երեսխաններին՝ պատմել իւրաքանչիւրը նրանցից առանձին: Այլ ամբողջ պատմութիւնը չպէտք է լինի չափազանց երկար, այլ այնպէս՝ որ կարողանայ տեղաւորուել երեսխանների փոքրիկ յիշողութեան մէջ և վերջանայ ամեն աշակերտաց պատմողութիւնը մի կէս ժամուայ դասավորուած: Աստուածաշնչի պատմութեանց այժմեան մեր դասադրքերը չափազանց երկար են և չափազանց բարդուած: Բայց մեծ պատմութիւնների փոքրների բաժանելու ժամանակ պէտք է հոգացուի, որ նոցանից իւրաքանչիւրը պարունակէ իւր մէջ մի միտք կամ մի բովանդակութիւն:

Ինչ որ վերաբերվում է Աստուածաշնչի մի քանի պատմութիւնների նկարագրութեան, պէտք է չդիպել նրանց, ըստ որում նրանցով միայն հետաքրքրութիւն կարող է շարժել աւելի լաւ է բաց թողնել նրանք, որոնք կարող են առիթ լինել երեսխանների երեսբացութեանը և զգայական կիրքերին. զոր օրինակ պատմութիւնները՝ Ղովտի աղջիկների, Բոբովամի և Յուդայի արեւնախառնութեան մասին ևլն. պէտք է թողնել, ինչպէս այն շրջանում՝ նմանապէս և միւս շրջաններում, մինչև երեսխան հասունանայ այնպիսի պատմութիւններ

լուրջ և անվտանգ կարգալու համար. բայց կարելի է ոչ այնքան խոշոր և գայթակեցուցիչ արտայայտութիւններով մի փոքր պատշաճաւորութիւն տալ, պահպանելով նրանց կամակից, զոր օրինակ պատմութիւնները՝ Սողոմաւոց, Պետափրէսի կնոջ, Բերսարէյի ևլն: Այնուամենայնիւ երկիւղ պէտք է կրել, որ խոտորեցուցիչ արտայայտութիւններով հետաքրքրութիւն չը զարթուցանէ ուսուցիչը, և տեղեւ չտայ աշակերտների կողմից պարզամիտ հարցմունքների, որոնց վերայ կարող են ծիծաղել հասունացած աշակերտքը. բայց թողուլ մի քանի պատմութիւններ միայն նորա համար, որ ոմանց կարող էին անվայելուչ թուիլ Աստուծոյ մեծափառութեանը և արդարութեանը, ինչպէս Նդիսէի և արջերի պատմութիւնը, Յեսու՝ Վաւեայի ձեռքով Վանանացւոց երկրի կործանումը, ըստ իմ կարծեաց՝ իմաստակութիւն է: Չէ՞ որ հազար անգամ պարտական ենք կրկնելու՝ «Անքննելի են Աստուծոյ ճանապարհները», մե՞նք արդեօք դուրս պէտք է գանք Աստուծոյ հետ խորհրդակցելու: Սակայն ներելի է մեզմէլ արտայայտութիւնները, որպէս զի այդպիսի պատմութիւնները չթուին երեսխաններին հակասութիւն միւս մնացելոց, և տեղեւ չտային այնպիսի հարցմունքների, որոց պատասխանել դժուար է*):

(*) Արեւի է վեր առնուլ հետեւեալ պատմութիւնները, բաժանելով նրանցից ոմանք աւելի փոքրերի վերայ, և տալով իւրաքանչիւրին առանձին վերնագիր: Էին Ատակարանից՝ Ստեղծագործութիւնը առաջին մարդերի զբախտի մէջ, և նոցա մեղքի մէջ ընկնելը. — Ապէն և Արեւ. — Զրհեղիղը. — Նոյր և նորա որդիքը. — Բարեկոնի

Բ. Կրօնի ուսման երկրորդ շրջանում
 Աստուածաշնչից պէտք է ուսուցանել մի
 և նոյնը, միայն թէ աւելի մանրամասնաբար
 ընդարձակելով նրանց: Պէտք է պատմել
 այնուհետեւ մի անցքի ամեն ձիւղերը, ի

աշտարակաշնութիւնը. — Աբրահամը և Ղով-
 տը. — Իսահակի զոհ բերվիլը. — Ռեբեկան, և
 Իսահակի օրհնութիւնը. — երկրից երկինք բարձ-
 րացած սանգուղը Յակովբի տիպեան մէջ. —
 Նորա հաշտութիւնը իւր եղբօր հետ. — Յովսէփի
 իւր եղբայրներից վաճառուիլը. — Յովսէփը Պե-
 տագրէսի տանը. — Յովսէփը բանտումը. — Նորա
 ազատութիւնը. — Նորա եղբայրների առաջին ճա-
 նապարհորդութիւնը դէպ ի Եգիպտոս. — Նոցա
 երկրորդ ճանապարհորդութիւնը նոյն տեղը. —
 Մովսիսի ծնունդը. — Եգիպտոսից նորա փախուս-
 տը. — Իսրայէլացւոց Եգիպտոսից ելանելը. —
 Ոսկեայ հորձը. — երկնային մանանան. — ապա-
 ոածից ջրի թղիսումը. — լորամարդիքը. — Յորդա-
 նանից անցանելը. — Բախար կինը. — Բարադամի
 էջը. — Հեփթայեայ աղջիկը. — Սամսոնը. — Հե-
 ղի քահանայն և Սամուէլը. — Սաուղի էջը. —
 Դաւիթ իւր Սաղմոսարանով. — Դաւիթ և Գո-
 ղիամը. — Դաւիթ և Մեղքող. — Դաւիթ և
 Յովնաման. — Սաուղը քարանձաւում. — Սա-
 ւուղը, նորա նիզակը և բաժակը. — Արիգեան և
 Դաւիթ. — Արիսողոմի մահը. — Սողոմոնի դա-
 տաստանը. — Սաբայի Թագուհին. — Եղիայ մար-
 գարէն և այրի կինը. — Եղիսէն և արջերը. — Ե-
 ղիսէն յարուցանում է Սոմնացւոյ որդին. — Նէե-
 ման և Գէէզին. — Յովբը. — Դանիէլի կրթու-
 թիւնը. — Դանիէլը առիւծների զրի մէջ. — Բա-
 բելոնի հնոցը. — Յովնանը կիտի որովայնում:

Նոր Ատակարանից, — Յիսուսի ծնունդը. — նորա
 փախուստը դէպ ի Եգիպտոս. — երկոտասանամայ
 Յիսուսը ծաճարումը. — Յիսուսի մկրտութիւնը. —
 Վափառնայումի հարիւրապետը. — Նային քաղա-
 քի այրի կնոջ որդին. — Առակ ցորեանի մէջ ցան-
 ւած որոմնի համար. — Յովհաննու Մկրտչի զըլ-
 խատումը. — Հինգ հազար մարդոց յագեցուցա-
 նելը. — Յիսուս գնում է ջրի վերայից. — Յիսու-

բաց առնելով ամեն դժուարութիւնները
 բացատրութեան համար, ծանօթացնել
 փոքր առ փոքր Աստուածաշնչի լեզուին.
 սոցա հետ կից պէտք է ունենալ բովան-
 դակութեան պարզ բացատրութիւն և

սի պլակներպութիւնը. — բարեօրտ Սամարացին.
 — Մարթան և Մարիամը. — Անաուկ որդին. —
 Մեծատունը և աղքատ Ղաղարոսը. — Չաքէի
 ձիթենւոյ վերայ ելանելը. — Յիսուսի Երուսաղէմ
 մտանելը. — Տասն կուսանաց առակը. — Յիսու-
 սի ընթրիքը. — մատնիչ Յուդան. — Գեթսեմա-
 նին. — Պետրոսի ուրացութիւնը. — Պիղատոսը. —
 Յիսուսի խաչելութիւնը. — Նորա թաղումը. —
 Նորա Յարութիւնը և Համբարձումը:

Առակներից պէտք է յառաջ բերվին այստեղ այն-
 պիսները, որոց բովանդակութիւնը գրաւող է և
 կարօտ չէ այնքան բացատրութիւնների, որոնք վե-
 րաբերվում են յետագայ շրջանին: Եթէ սահման-
 լի այս դասասացութեան համար իւրաքանչիւր շա-
 բաթի մէջ երկու ժամ, բայց սկզբում բաժանելով
 երկու կիսաժամեայ դասերի, երկու տարուայ ուսման
 շրջանում կարելի է աւանդել 160 դաս: Պատմու-
 թիւնների թիւը ևս հասանում է մօտ 80ի, որոց
 հարկաւոր է բաժանել և հասուցանել գոնէ մին-
 չեւ 100ի: Առաջին տարուայ մէջ, երբ երեխանե-
 րը համարեալ բառ առ բառ պէտք է կրկնեն ու-
 սուցչից լսած պատմութիւնը, գործը ծանրաբայլ
 յառաջ կերթայ. երկրորդ տարուայ մէջ ի հարկէ
 աւելի արագ, Միանգամայն այսպիսի բազմամասն
 պատմութիւններ ուսուցանելու համար հազիւ բա-
 ւական է երկու տարի, մանաւանդ թէ հարկա-
 ւոր է այնուհետեւ պահանջել աշակերտներից բա-
 րոյական ասացուածների բերանացի սերտողու-
 թիւն: Ահաւասիկ մի օրինակ այդպիսի պատմու-
 թիւնների ուսման առաջին շրջանի համար:

ԿՍԵՆ ԵՒ ԱՐԷԼ:

Առաջին երկու մարդիքը, մեր նախածնողները
 արտաբնուեցին զրախտիցը Աստուծոյ կամքը չկա-
 տարելու համար. և նորա փոխանակ սկսեցին ապ-
 րել այս աշխարհի մէջ իւրեանց ձեռքի աշխատու-

բարոյական խորհրդածութիւններ: Աւ որովհետեւ երեխաները արդէն կարող են կարգալ, պէտք է նոցա ձեռքը տալ Աստուծոյն հասարակութեան Բարեկամներէն, ի բաց թողնելով մի քա-

թիւնով. նոքա երկու երկու որդիք ունեցան, որոնք նոյնպէս օգնում էին նրանց աշխատութեան մէջ: Աւագ որդի Այէնը երկրագործութիւնով էր պարապում. և երկրորդ որդին - Արէլը հովուութիւնով: Երբ որ ամբողջ տարին նոքա աշխատում էին, ամեն մինը նոցանից մի մի սեղան էին շինում քարերից, դիզում էին նոցա վերայ չոր փայտեր և վառում. երբ որ բոցը բարձրանում էր, գնում էին նոցա ամեն մինը իւր ունեցածներէն լաւագոյնը, որ մատաղ լինի Աստուծոյ: Միանգամ երբ որ կրկին օրհնեց Աստուած առաջին մարդերի աշխատանքը, գնացին Այէնը և Արէլը իւրեանց սովորական մատաղը անելու: Պայէնը առաւ հասարակ ցորենի մի խուրձ և Արէլը մի լաւ գառն. Այէնը Արէլի նման մաքրասիրտ չէր, ուստի և Աստուած չընդունեց Այէնի մատաղը այնպէս՝ ինչպէս նորա եղբայր Արէլինը. Այէնը փոխանակ իւր վարքը ուղղելու, իւր սիրտը մաքրելու, սկսեց նախանձել իւր բարի եղբոր վերայ և ատել նրան: Ողորմած Աստուածը յանդիմանեց նրան և ասաց՝ «Մեծ մեղք է քեզ համար, որ դու այդպէս քո եղբորը ատում ես», բայց Պայէնը չուղղուեց և աւելի դառնութեամբ էր վարվում իւր եղբոր հետ: Մի անգամ երբ երկուքն ևս դաշտում աշխատելիս են լինում, սկսում է Այէնը բարկանալ Արէլի վերայ. «Եղբայր իմ, պատասխանում է Արէլը, ի՞նչ եմ արել քեզ», իսկ Այէնը գազանի կատաղութիւնով յարձակվում է Արէլի վերայ և այնպէս սաստիկ զարկում է նրան, որ նորա հոգին իսկոյն դուրս է գալիս. ոչ ոք չէ տեսնում այս, բայց տեսնում է Աստուած, և ձայն է տալիս դէպ ի Այէնը՝ «Պայէն, ո՞ւր է քո Արէլ եղբայրը», և չար Այէնը սկսում է դարձեալ կամակորովիլ և ասում է՝ «Ինձ ի՞նչ հարկաւորութիւն կայ իմանալու», «Դու քո անմեղ եղբոր արիւնը թափեցիր. նորա արիւնը

նի վարդապետական տեղեր: Այս ամենը դեռ ևս գլխաւորապէս պատմական շքեշանն է, որի մէջ արտափայլում են Աբրայայական ազգի մասնաւոր նշանակութիւնը և Յիսուսի Վերիստոսի յայտնութեան պատրաստութիւնը: Պատմական դասատուութեան հետ այժմ պէտք է միացնել և Աստուածաշնչի իմաստալից ասացուածները, որոնք բացայայտ դուրս կերեւելին նոյն իսկ պատմութիւնից, և որոնք կվերաբերէին բարոյականութեան, անգիր սերտել տալով հիմնաւորապէս: Իսկոյն կուտել նրանք չափազանց կերպով և առաջարկել անպատեհ միջոցում ի հարկէ նշանակում է դժուարացնել և մթնացնել դասատուութիւնը և մինչև անգամ զրկել նրան պարզութիւնից: Աւելորդ չէր լինիլ, եթէ Աստուածաշնչի պատմախօսութեանցը կից լինէին և նորա իմաստալից ասացուածները իբրև

դէպ ի երկինք է բողբոջում. ի՞նչպէս դու դեռ ևս կամակորովում ես», Այս միջոցից իսկ յուսահատվում է Այէնը և իւր մեղքը հասկանում. «Եւ, գոչում է նա, ես այս ի՞նչ արեցի. իմ մեղքս մեծ է, այնպէս մեծ, որ ոչ ոք չէ կարող քաւել նրան, չեմ համարձակվում նայել իմ հօր և իմ մօր վրայ, չեմ համարձակվում տուն ևս վերադառնալ. ով որ ինձ պատահի, կսպանի ինձ, թողնեմ իմ դաշտը, և փախչեմ անտառները և անապատները, որ ոչ ոք չտեսնէ ինձ», Այս ասում և փախչում է նա և նորա յետեւից լսվում է հառաչանք, որպէս թէ հառաչում է նորա եղբայրը մահուան առաջ. այժմ և գիշերները միշտ երազումք նա Արէլին, որպէս թէ մահացած և արիւնշաղաղալ ընկած է իւր առաջին, և իրեն այնպէս էր երեւում, որ մինը մուրձով զարկում էր նրան և ասում՝ «Դու սպանեցիր քո եղբայրը, ով եղբայրասպան», Այսպէս չարաբոլեց նա միշտ, և իւր կեանքում նա չտեսաւ հանգստութիւն մինչև իւր մահուան րոպէն:

յաւելուած: Աւ որովհետեւ այս շրջանի համար պահանջվում է յայտնի չափով բովանդակութեան լիակատարութիւն, և որովհետեւ աշակերտները (9—10 տարի) արդէն մտաւորապէս բաւականաչափ զարգացած էին, ուստի ինչպէս աշխարհական պատմութեան մէջ, այս տեղ ևս կարելի է սկսել անցքերի դասակարգութիւնը. ինչ որ ուսանողւմ էին առանձին առանձին, այժմ նրանք դաս է տրվում բնական կապով: Պատմական համառօտ նկարագիրները փոխարկվում են կենսագրութիւնների, միայն որչափ կարելի է առարկայի և Աստուածաշնչի պատմութեան տեսակին համեմատ: Աւ բարոյական խորհրդածութիւնները այժմ աւելի ազդող են լինում, ոչ թէ, այսպէս ասած, իբրեւ օգտակար խրատներ, այլ իբրեւ համեմատութիւններ, այնպէս զի պատմութիւնները իւրեանց կողմնակի հանգամանքներով առանց մինչն աւելորդ զանցառութեան պատմուելով և վերապատմուելով՝ աշակերտը ևս բաւական հեշտութեամբ կկարողանայ շահուել այս նիւթից: Աս կարող է համեմատութիւն առնել զանազան ժամանակներում, կեանքի պէս պէս դրութեամբ ապրող անձանց մէջ, որոց մասին Աստուածաշնչի՝ և թէ այլ և այլ պատմութիւնների մէջ պատմուած են, և թէ իրանց, որոնց ինքը իսկ ականատես է: Այժմ ևս կարելի է եղելութիւնքը աւելի ընդհանուր հայեացքի ենթարկել: Առաւելապէս հրահանգիչ է հին Ատակարանը նորի հետ համեմատելը: Յովհաննէս Մկրտչի ծննդեան աւետիքը պատմելու ժամանակ կարելի է յիշատակել և Սամոնիներ և Սամուէլիներ, որոնք նման են առաջնոյն: Յիսուսի տաճարին ընծայ-

ւելու պատմութեան հետ կարելի է յիշել և Սամուէլի յանձնուելը Հեղի քահանային տաճարումը. Յիսուսը Ազիպոսում, Մովսէսը Փարաւօնի պալատում, Յիսուսը տաճարումը և Վանիէլը՝ Աբուգոդոնոսորի յառաջ: Բարոյականութեան դասերը, որպիսի դիպուածում ևս ուսուցանէին, կրացարուին նոյնպէս Սրբազան պատմութեան օրինակներով: «Մի՛ սպանաներ, պատուէրը յիշեցնում է Այեհնին, Մովսէսին, Սաուլին և Հելիթային և ինչ: «Լեր ողորմած, յիշեցնում է Մովսիսի՝ ջրից ազատութիւնը, Բախարին, Վաւթին և ինչ: Այսպէսով երկու օգուտ է յառաջանում, վերացական հասկացողութիւնքը ընդունում են տեսառականութիւն, և համեմատութիւններով արած պատմութիւնը զանազանակերպութիւն է ստանում: Աոր Ատակարանի առակները, որոնցից հազիւ թէ սակաւները յարմարվում էին նախընթաց ուսման շրջանին, այժմ զրեթէ կարող են սովորական դառնալ, բաց ի նոցա խորին բացատրութիւններից:

(Մատթ. 13: 1-52):

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՇԼՐԱԿԱՅ:

(ՇԼՐԱԿԱՅԻՆ):

ԳԻՆԱՐԱՅԻՆ ԿԵՆՏՐԱՆԻ ՇԼՐԱԿԱՅ:

Ի դասակարգել մեր զգիւղացի, ոյր առաջեալ գնեմք Հ.՝ պարտ է իմանալ զնա Հայաքնակ, ուր Տ.՝ Տաճկաքնակ. իսկ ուր Հ.